



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ N° 08-Լ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ  
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ  
25-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների նախագահների  
խորհրդի 2009 թվականի դեկտեմբերի 30-ի «Դատական ծառայողի գործունեության  
գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևերը հաստատելու մասին» թիվ  
25-Լ որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ  
փոփոխությունները.

- 1) 4-րդ կետի «տարեկան» բառը փոխարինել «կիսամյակային» բառով.
- 2) 5-րդ կետի «յուրաքանչյուր տարի նոյեմբերի 1-ից մինչև 15-ը» բառերը  
փոխարինել «առաջին կիսամյակի համար մինչև հուլիսի 5-ը, երկրորդ կիսամյակի  
համար՝ մինչև հաջորդ տարվա հունվարի 15-ը» բառերով.
- 3) 10-րդ կետի «յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 15-ից» բառերը փոխարինել  
«բնութագիրը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում,» բառերով:

ԼՂՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

